

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

31 մայիսի 2021թ.
ք.Երևան

N 108-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 քառակուսի սետրև գերազանցող սպաբերող ՌՈՒԲԵՐՏ ԶՈՉԱՐՅԱՆԻ
«ԿՅԱՆՔ ԵՎ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԿԱՌՈՒՑԵԼԻՍ» ԳՐԱՌՄԱՄԲ ՊԱՏՏԱՌԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԱՍՈՑԻԱՅՎՈՂ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 21-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասության համաձայն. «Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում»:

Նույն հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն.

«Նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում վերացման են ենթակա նաև կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, և որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները»:

Հիմք ընդունելով նշված իրավանորմերի պահանջները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ իրականացրած վարչական վարույթի շրջանակներում կատարած շրջայցերի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված փաստաթղթերի ուսումնասիրմամբ պարզել է, որ առկա են մի շարք արտաքին գովազդային վահանակներ, որոնց վրա տեղադրված են 5 քառակուսի մետրը գերազանցող Ռոբերտ Քոչարյանի հեղինակած «Կյանք և ազատություն» գրքի պատկերը և «Հայաստանը կառուցելիս» գրառումը պարունակող պաստառներ, որոնց էսքիզը ներկայացվել է «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից որպես «Հավելված թիվ 113/21», «Հավելված թիվ 67/21», ինչպես նաև Ադվերսիթի ՍՊԸ-ի կողմից և հաստատվել (Երևանի քաղաքապետի 25.05.2021թ.

N01/52-630974 գրությամբ ներկայացված ցանկի 28-րդ և 38-րդ կետեր՝ կից էսքիզներով):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացի Ռոբերտ Քոչարյանը Հայաստան դաշինքի ընտրական ցուցակով գրանցված է որպես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների պատգամավորի թեկնածու, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նրա հեղինակած գրքի պատկերով պաստառներն իրենց բովանդակությամբ ասոցացվում են նախընտրական քարոզչության հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգիրք 21-րդ հոդվածի 9-րդ մասի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Քաղաքացի Ռոբերտ Քոչարյանի «Կյանք և ազատություն» գրքի պատկերը և «Հայաստանը կառուցելիս» գրառումը պարունակող պաստառները ճանաչել Հայաստան դաշինքի նախընտրական քարոզչության հետ ասոցացվող:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ**

S. Մուկուչյան